Դեպի Հյուսի՞ս, թե՞ Արևմուտք դիրքորոշումներ.
Հասարակական կարծիքի ուսումնասիրության արդյունքներ

Կրկնվող հետազոտության համեմատական տվյալներ. 2014-2017թթ.

2017 թ.-ի մայիսին Հայաստանի Հանրապետության ողջ տարածքով (Երևան քաղաքում և բոլոր մարզերում) Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից «Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ» հասարակական կազմակերպության (APR Group) ներգրավմամբ իրականացվել է սոցիոլոգիական հետազոտություն, որի խնդիրներից մեկը է եղել՝ պարզել հասարակության դիրքորոշումները միջազգային կառույցների՝ Եվրոպական կառույցների (Եվրամիությանը) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) հանդեպ, այն է՝ ՀՀ բնակչության նախապատվությունները դեպի Հյուսիս կամ Արևմուտք՝ Հայաստանի Հանրապետության կողմնորոշման վերաբերյալ:

Հետազոտությունն իրականացվել է 1200 հոգու շրջանում (95% վստահության միջակայքում, ±2.8% սխալի մեծությամբ), կիսաստանդարտացված հարցազրույցների մեթոդով՝ CAPI-ի տեխնիկայի կիրառմամբ: 2017թ. ստացված տվյալները համեմատվել են նախորդ երեք տարիներին (2014թ., 2015թ. և 2016թ.) իրականացված նմանատիպ հետազոտությունների արդյունքների հետ:

Հարցվածների կարծիքները՝ միջազգային կառույցներին Հայաստանի Հանրապետության ցանկալի անդամակցության վերաբերյալ, բաշխվել են հետևյալ կերպ՝ 33%-ն այն կարծիքին է, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է անդամակցի Եվրոպական կառույցներին (Եվրամիությանը), 32%-ը՝ Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ), 12%-ը՝ և՛ Եվրամիությանը, և՛ ԵԱՏՄ-ին, իսկ 10%-ը դեմ է արտահայտվել նշված կառույցներից որևէ մեկին Հայաստանի Հանրապետության անդամակցությանը: Այս հարցին դժվարացել է պատասխանել հարցվողների 12%-ը:

Համեմատական անցկացնելով նախորդ երեք տարիների նմանատիպ հետազոտությունների արդյունքների հետ՝ նկատելի է, որ միջազգային կառույցներին Հայաստանի Հանրապետության ցանկալի անդամակցության վերաբերյալ հարցվածների նախապատվություններում տեղի են ունեցել փոփոխություններ: Արդյունքները ներկայացված են Գծապատկեր 1-ում:



Ինչպես տեսնում ենք գծապատկերից, 2017թ.-ին 2016թ.-ի համեմատ նվազել է Եվրամիությանն (ԵՄ) անդամակցելու կողմնակիցների թիվը (41%-ից 33%), և աճել է ԵԱՏՄ-ի կողմնակիցների թիվը (25%-ից 32%): Նկատենք, որ, ճիշտ է, 2017թ. Եվրամիության կողմնակիցների թիվը նվազել է 2016թ.-ի համեմատ, սակայն ավելի բարձր է, քան 2014-2015թթ.: Միաժամանակ ԵԱՏՄ անդամակցության կողմնակիցների թիվը 2017թ.-ին ավելի մեծ է, քան 2016թ.-ին, սակայն ավելի ցածր է, քան 2014-2015թթ.: **Այսպիսով՝ չորս տարիների ընթացքում, բացառությամբ 2016թ.-ի (որին առանձին կանդրադառնանք), տեղի է ունեցել Եվրամիության անդամակցության կողմնակիցների թվի աճ, միևնույն ժամանակ՝ ԵԱՏՄ կողմնակիցների թվի նվազում:**

2014-2017թթ.-ին հասարակական կարծիքի նշված օրինաչափությունից ակնհայտորեն տարբերվում են 2016թ. տվյալները: Մենք գտնում ենք, որ այն պայմանավորված է 2016թ. արտաքին քաղաքականության բնագավառում տեղի ունեցած միակ խոշոր իրադարձությամբ՝ 2016թ. ապրիլի 2-ից-5-ը Ղարաբաղյան հակամարտության գոտում պատերազմական գործողություններով, որի վերաբերյալ լուսաբանումներում և քննարկումներում ուշադրության հիմնական առարկա էր հանդիսանում Ռուսաստանի Դաշնության կողմից Ադրբեջանին մեծաքանակ սպառազինությունների մատակարարաման հարցը: Նշված խնդրի քննարկումը 2017թ. այլևս նույն սրությամբ չի գտնվում հանրային ուշադրության կենտրոնում, որի արդյունքում 2017թ. նվազել է Ռուսաստանի Դաշնության նկատմամբ բացասական վերաբերմունքի մակարդակը: Սրանով պայմանավորված փոխվել են նաև հանրային ընկալումները ՌԴ-ի նկատմամբ: ՌԴ-ի հանրային ընկալման փոփոխության մասին է վկայում նաև 2016թ. և 2017թ. արված ուսումնասիրությունների արդյունքների համեմատությունն այն հարցի շուրջ, թե ըստ հարցվողների, Ռուսաստանի Դաշնությունն ինչպիսի վերաբերմունք ունի ՀՀ

նկատմամբ՝ ոչ բարեկամական (թշնամական), թե՝ բարեկամական (Տե՛ս Գծապատկեր 2):



Դիտարկել ենք նաև միջազգային կառույցներին անդամակցության շուրջ հասարակական վերաբերմունքը՝ ըստ Հայաստանի Հանրապետության նկատմամբ առանձին երկրների դրսևորած քաղաքականության գնահատումների:

Այսպես՝ համաձայն 2017թ. հետազոտության արդյունքների, ԵԱՏՄ առանցքային նշանակություն ունեցող երկրի՝ Ռուսաստանի Դաշնության՝ որպես ոչ բարեկամ (թշնամի) երկիր համարողների 46.8%-ը նախապատվություն է տալիս Եվրոպական միությանն անդամակցելուն, ԵԱՏՄ-ին՝ 14.9%, իսկ Ռուսաստանի Դաշնությանը որպես բարեկամ երկիր նշողների 36.1%-ը կողմնակից է ԵԱՏՄ-ին, 31.6%-ը՝ Եվրամիությանը:

Ռուսաստանի Դաշնությանը որպես ոչ բարեկամ երկիր համարողների թվում Եվրամիության անդամակցությանը նախապատվություն տվողների տեսակարար կշիռը 3.1 անգամ առավել է, քան ԵԱՏՄ կողմնակիցներինը: Նման տարբերությունը բացակայում է Ռուսաստանի Դաշնությանը որպես բարեկամական երկիր համարողների շրջանում՝ Եվրամիության և ԵԱՏՄ-ի կողմնակիցների հարաբերակցության պարագայում: Այնուամենայնիվ նկատենք, որ նույնիսկ Ռուսաստանի Դաշնությանը որպես բարեկամ երկիր նշողների մոտ 1/3-ը՝ 31.6%-ը կողմնակից են Եվրամիության անդամակցությանը:

Այսպիսով՝ ակնհայտ է դառնում, որ ԵԱՏՄ հանդեպ հանրային վերաբերմունքի վրա էական ազդեցություն ունի ՌԴ-ի նկատմամբ հանրային կարծիքը: Միաժամանակ նկատենք, որ ՌԴ-ի նկատմամբ դրական վերաբերմունք ունեցողների շրջանում նույնպես կա բեկում դեպի Եվրոպական միության կողմը:

Այսինքն՝ հանրային կարծիքում ակնհայտ տեղաշարժ է տեղի ունեցել Եվրամիության անդամակցության ուղղությամբ, որի վրա ՌԴ-ի նկատմամբ դրական վերաբերմունքի ազդեցությունը էականորեն նվազել է:

Հետաքրքիր է, որ հասարակական կարծիքի համաձայն՝ ամենաբարեկամ պետությունը համարվող Ֆրանսիայի կողմնակիցների թվում Եվրամիության և ԵԱՏՄ-ի կողմնակիցների թիվը գրեթե հավասար է՝ համապատասխանաբար 34.9% և 32.5%: Այսպիսով՝ Եվրոպական միությանը անդամակցելու կողմնակիցների դիրքորոշման վրա էական նշանակություն ունի Ռուսաստանի Դաշնության նկատմամբ բացասական վերաբերմունքը:

Իրականացված հետազոտության տվյալները դիտարկվել են նաև միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության նախապատվությունները՝ ըստ մարզերի (Տե՛ս Գծապատկեր 3):



Ինչպես երևում է Գծապատկեր 3-ից, Եվրամիությանն անդամակցության կողմնակիցների թիվը ամենամեծն է Տավուշի (43.8%), Շիրակի (39.3%), Արարատի (37.5%) մարզերի և Երևան (35.5%) քաղաքի հարցվածների թվում: ԵԱՏՄ-ին նախապատվություն տվողները առավել մեծ թիվ են կազմում Լոռու (50%), Վայոց Ձորի (45.8%), Սյունիքի (41.7%) և Կոտայքի (38.4%) մարզի հարցվածների թվում:

Դիտարկելով ըստ մարզերի միջազգային կառույցներին Հայաստանի Հանրապետության անդամակցության վերաբերյալ 2014-2017թթ. տվյալները՝ կարելի է նկատել մի շարք միտումներ (տես Գծապատկեր 4):



Ինչպես ցույց են տալիս հետազոտության տվյալները, ուսումնասիրությունների իրականացման ողջ ժամանակահատվածում (2014-2017թթ.) միջազգային կառույցներին՝ ԵՄ-ին և ԵԱՏՄ-ին, նախապատվություն տվողների ընդհանուր թիվը ամենամեծն են Լոռու, Շիրակի, Արարատի, Կոտայքի մարզերի և Երևան քաղաքի բնակիչների շրջանում, որոնց կարելի է համարել առավել կողմնորոշված մարզեր (ԵՄ և ԵԱՏՄ կողմնակիցների թիվը բարձր է 50%-ից): Նման միտում չի արձանագրվել միայն Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերում, որտեղ ընդհակառակը՝ աճել են «երկուսին էլ» և «ոչ մեկին, ոչ էլ մյուսին» տարբերակները նշողների թիվը:

2014-2017թթ. իրականացված ուսումնասիրությունների արդյունքները հիմք են տալիս արձանագրելու, որ Եվրամիությանն անդամակցելու կողմնակիցների տոկոսը աճել է գրեթե բոլոր մարզերում և Երևան քաղաքում, բացառությամբ Գեղարքունիքի (2014թ. համեմատ 2017թ. նվազել է համեմատած 12%-ով), Սյունիքի (11%-ով) և Վայոց Ձորի (2%-ով) մարզերում (Տես Գծապատկեր 5): Եվ ընդհակառակը, ԵԱՏՄ-ի կողմնակիցների

տոկոսը գրեթե բոլոր մարզերում նվազել է, բացառությամբ Սյունիքի (2014թ. համեմատ 2017թ աճել է 24%-ով), Վայոց Ձորի (աճել է 5%-ով) և Կոտայքի (աճել է 2%-ով) մարզերի (Տե՛ս Գծապատկեր 5):

Գծապատկեր 5.
ԵՄ և ԵԱՏՄ նախապատվությունների բաշխումը ըստ մարզերի 2014-2017թթ



Դիտարկելով 2014-2017թթ. հետազոտությունների արդյունքները, առանձնացնենք Եվրամիությանն ու Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության կողմնակիցների ընդհանրական բնութագիրը (իդեալական տիպերը)՝ ըստ հարցվածների սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչների (Տես Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Միջազգային կառույցներին կողմնակիցների սոցիալ-ժողովրդագրական բնութագրիչներ

բնութագրիչի անվանումը	Եվրամիություն	Եվրասիական տնտեսական միություն
Տարիք	18-45 տարեկան	45 տարեկանից բարձր
Սեռ	Իգական	Արական
Բնակավայրի տիպ	Քաղաքային	Գյուղական
Ընտանիքի միջին ամսական եկամտի չափ	150.001 դրամից ավել	Մինչև 150.000դր

Այսպես՝ Եվրամիության անդամակցության կողմնակիցները մեծամասամբ՝ 18-45 տարեկան են, իգական սեռի ներկայացուցիչներ, որոնք բնակվում են մայրաքաղաքում և մարզային քաղաքներում և նրանց ընտանիքի միջին ամսական եկամտի չափը բարձր է 150001 դրամից:

ԵԱՏՄ-ին անդամակցությանն ավելի շատ նախապատվություն են տալիս 45 տարեկանից բարձր, արական սեռի ներկայացուցիչները, որոնք բնակվում են գյուղական բնակավայրերում և նրանց ընտանիքի միջին ամսական եկամտի չափը ցածր է 150000 (հարյուր հիսուն հազար դրամ) դրամից:

Մեր կարծիքով, նախապատվությունների նշված տարբերությունն, ըստ տարիքային խմբերի, պայմանավորված է նրանով, որ ավելի բարձր տարիքային խմբերի ներկայացուցիչները, ապրելով ԽՍՀՄ ժամանակաշրջանում, կողմ են արտահայտվում ԵԱՏՄ-ի անդամակցությանը, արտահայտելով անցյալի վերականգնման իրենց ձգտումները: Նախապատվությունների տարբերությունը ըստ բնակավայրի տիպերի կարելի է բացատրել նրանցից բնակչության միգրացիոն միտումների տարբերությամբ. գյուղական համայնքների բնակչությունը մեծամասամբ մեկնում է Ռուսաստանի Դաշնություն՝ արտագնա աշխատանքի և ավելի շատ է հակված ԵԱՏՄ-ին անդամակցությանը:

Շեշտենք, որ ներկայացված միտումները պահպանվել են 2014-2017թթ. ուսումնասիրության ընթացքում:

Գնահատել ենք նաև միջազգային կառույցներին անդամակցության նախապատվությունների վրա մի շարք քաղաքական/պետական ինստիտուտների աշխատանքով բավարարվածության աստիճանի ազդեցությունը:

Այսպես, Եվրամիության անդամակցությանը նախապատվություն տվողների մեծ մասը ավելի շատ բավարարված չեն ՀՀ Նախագահի, ՀՀ Կառավարության/վարչապետի, դատական համակարգի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, իրավապահ մարմինների (Ոստիկանություն, Դատախազություն, ՀՔԾ), Զինված ուժերի աշխատանքով: Այն հարցվողները, ովքեր ավելի շատ բավարարված են նշված կառույցների աշխատանքից, նախապատվություն են տալիս ԵԱՏՄ-ին անդամակցությանը (Տես՝ Գծապատկեր 6):



Այս միտումն առավել հստակ ուրվագծվում է 2017թ.-ին, ի տարբերություն նախորդ տարիների:

Կարելի է եզրակացնել, որ Եվրամիությանն անդամակցությանը նախապատվություն տվողները ակնկալում են ՀՀ քաղաքական/պետական կառույցների աշխատանքի բարելավում:

Հարկ ենք համարում նշել, որ ըստ 2017թ. հետազոտության տվյալների, Եվրամիության և ԵԱՏՄ կողմնորոշումների վրա էական ազդեցություն ունեն քաղաքական իրադարձությունների վերաբերյալ հարցվողների տեղեկատվության աղբյուրները:

Այսպես՝ հեռուստատեսությունը որպես տեղեկատվության ստացման հիմնական աղբյուր նշողների 28.0%-ը նախապատվություն են տալիս Եվրամիությանն անդամակցությանը, իսկ 35.2%-ը՝ ԵԱՏՄ-ին: Տպագիր մամուլը որպես տեղեկատվության ստացման հիմնական աղբյուր նշողների 50.0%-ը

նախապտվությունը տալիս են Եվրամիությանը և ոչ ոք չի նշել ԵԱՏՄ: Առցանց մամուլից տեղեկություն ստացողների 37.5%-ը նախընտրում է Եվրամիություն, իսկ 28.2%-ը՝ ԵԱՏՄ: Սոցիալական կայքերը որպես տեղեկատվության ստացման հիմնական աղբյուր նշողների 43.6%-ը՝ նախընտրում են անդամակցությունը Եվրամիության, իսկ 27.7%-ը՝ ԵԱՏՄ-ին: Աշխատավայրում տեղեկատվություն ստացողների 14.3%-ը նախընտրում են Եվրամիությունը, 43.9%-ը՝ ԵԱՏՄ, իսկ հանդիպումներից, հանրային քննարկումներից տեղեկություն ստացողներից ոչ ոք չի նշել Եվրամիություն և 66.7%-ը նախընտրել է ԵԱՏՄ:

Այսպիսով՝ իշխանությունների կողմից վերահսկվող առավել լայն լսարան ունեցող տեղեկատվության աղբյուրից՝ հեռուստատեսությունից տեղեկություններ ստացողների թվում գերակշռում են ԵԱՏՄ-ին անդամակցողների կողմնակիցները, իսկ իշխանության կողմից քիչ վերահսկվող տեղեկատվության աղբյուրից՝ սոցիալական կայքերից տեղեկատվություն ստացողների թվում գերիշխում են Եվրամիության անդամակացության կողմնակիցները:

Միջազգային կառույցներին անդամակցության նախապատվությունների վրա որոշակի ազդեցություն ունեն նաև Հայաստանի Հանրապետության հանդեպ այդ կառույցների անդամ պետությունների վերաբերյալ հանրային դիրքորոշումները: Հայաստանի Հանրապետության հանդեպ առավել բարեկամաբար տրամադրված են համարվում հետևյալ հինգ պետությունները՝ Ֆրանսիան (77.9%), Ռուսաստանը (76.9%), Պարսկաստանը (51.8%), Հունաստանը (50.1%) և Գերմանիան (48.8%):

Բարեկամ և թշնամի պետությունների ընկալումների միջինացված արդյունքների հաշվարկը ցույց է տալիս, որ դրական ընկալումներն ավելի շատ գերակշռում են Եվրամիության, քան ԵԱՏՄ անդամ պետությունների (Ռուսաստանի Դաշնություն, Բելառուս, Ղազախստան և Ղրղզստան) նկատմամբ:

Այս ցուցանիշները գրեթե չեն փոփոխվել 2016թ. հետազոտության արդյունքների համեմատ:

Հարցվողների միգրացիոն տրամադրությունները նույնպես ազդեցություն ունեն միջազգային կառույցներին անդամակցության կողմնորոշումների վրա:

Այն հարցին, թե հնարավորության դեպքում արդյոք կմեկնեի՞ք Հայաստանի Հանրապետությունից դուրս՝ մշտական բնակության, հարցվողների 37%-ը տվել է «միանշանակ այո», 37%-ը՝ «միանշանակ ոչ», 17%-ը՝ «հավանաբար այո» և 9%-ը՝ «հավանաբար ոչ» պատասխաններ: Նկատենք, որ 2016 թ.-ի համեմատ արտագաղթելու ցանկություն հայտնածների թիվը 2017թ. համեմատ նվազել է (5%-ով), և աճել է արտագաղթել չցանկացողների թիվը (4%-ով):

2017թ. հետազոտության տվյալները ցույց են տալիս, որ Եվրամիությանն անդամակցելու կողմնակիցների թվում գերակշռում են արտագաղթելու ցանկություն հայտնողները. «միանշանակ այո»՝ 42.3%, «հավանաբար այո»՝ 19.9%, ընդամենը 62.2%: Արտագաղթելու ցանկություն չհայտնողները կազմում են ընդամենը 37.2%: ԵԱՏՄ-ի

կողմնակիցների թվում արտագաղթելու մտադրություն ունեցողները («միանշանակ այո»՝ 34.9%, «հավանաբար այո»՝13.9%, ընդամենը՝ 48.8%) և չունեցողները («միանշանակ ոչ»՝ 40.7%, «հավանաբար ոչ»՝ 10%, ընդամենը՝ 50.7%) մոտավորապես հավասար են:

Այսպիսով՝ Եվրամիության անդամակցության կողմնակիցները ավելի մեծ չափով են հակված արտագաղթելու, քան ԵԱՏՄ-ի կողմնակիցները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով «Դեպի Հյուսի՞ս, թե՞ Արևմուտք դիրքորոշումներ. հասարակական կարծիքի ուսումնասիրության արդյունքները»՝ կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները.

- 2013թ. սեպտեմբերի 3-ից հետո, երբ ՀՀ ամենաբարձր մակարդակում հայտարարվեց Մաքսային, հետո Եվրասիական տնտեսական միությանն անդամագրվելու մասին, Հայաստանի Հանրապետությունում միջազգային այս կառույցի անդամագրման կողմնակիցների թիվը վերջին չորս տարիների՝ 2014-17 թթ. ընթացքում նվազել է, զուգահեռաբար աճել են Եվրոպական միությանն անդամակցելու կողմնակիցների թիվը,

- 2014-17թթ. Եվրասիական տնտեսական միության անդամակցության կողմնակիցների դիրքորոշման վրա Ռուսաստանի Դաշնության որպես բարեկամ պետություն համարելու գործոնի ազդեցությունը էականորեն նվազել է,

- Անցած չորս տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության հասարակությունը ավելի է հստակեցրել իր դիրքորոշումները նշված միջազգային երկու կառույցներին անդամակցելու վերաբերյալ. առավել երիտասարդները, առավելապես կանայք, որոնք բնակվում են քաղաքային բնակավայրերում և Երևանում, և նրանց ընտանիքների միջին ամսական եկամուտը բարձր է հանրապետական միջին եկամտից, նախընտրում են Հայաստանի Հանրապետության անդամակցությունը Եվրոպական միությանը,

- Եվրոպական միության անդամակցության կողմնակիցները ակնկալում են ՀՀ քաղաքական/պետական ինստիտուտների գործունեության բարելավում, միաժամանակ մեծ են նրանց մոտ արտագաղթի միտումները,

- Առավել մեծ լսարան ունեցող լրատվական միջոցներն առավել մեծ չափով տեղեկություններ են ներկայացնում Եվրասիական տնտեսական միության, քան Եվրոպական միության մասին:

27. 09. 2017թ.

«Դեպի Հյուսի՞ս, թե՞ Արևմուտք դիրքորոշումներ. Հասարակական կարծիքի ուսումնասիրությունների արդյունքներ» հետազոտությունը պատրաստվել է Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից իրականացվող «Ոստիկանության հետ հարաբերություններում քաղաքացիների իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացում» ծրագրի շրջանակում՝ Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի ֆինանսական օժանդակությամբ:

Հետազոտության մեջ տեղ գտած կարծիքները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին: